ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 05/2026/Դ/Վ

ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՑԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 8 հուլիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հուլիսի 1-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Սեմյոն Բաբայանի դիմումը (այսուհետ՝ Դիմում)՝ ընտրական փուլում պետական միջոցների հավանական քաղաքականացման և վարչական ռեսուրսի չարաշահման (վարքագծի կանոնների խախտման) և պետական միջոցների քաղաքականացման, ընտրողների անուղղակի կաշառման և Սահմանադրական դատարանի դատավորների անաչառության խաթարման վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ.

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Նախընտրական և ընտրական ժամանակահատվածում ՀՀ գործադիր և օրենսդիր իշխանությունների կողմից իրականացվել են բյուջետային միջոցների կտրուկ և թիրախային վերաբաշխումներ: Մասնավորապես՝ որոշումներ են ընդունվել Սահմանադրական դատարանի դատավորների աշխատավարձերի/հավելումների կտրուկ բարձրացման, քաղաքացիական և հանրային ծառայողների պարգևավճարների ու թոշակառուների համար նախատեսված սոցիալական ծրագրերի ընդլայնման վերաբերյալ:

1.2 *Ընտրողների անուղղակի կաշառման և վարչական ռեսուրսի չարաշահման մասով* դիմումի պահանջի հետ կապված Դիմումատուն ներկայացրել է ընտրությունների նախաշեմին պետական միջոցների նպատակային բաշխման վերաբերյալ հետևյալ փաստարկները և նորմեր.

1.2.1 **Ընտրողների կամքի ազատ արտահայտման խախտում (ՀՀ Ընտրական օրենսգիրք, Հոդված 4).** Ընտրություններից անմիջապես առաջ թոշակների և պարգևավճարների թիրախային բարձրացումը խաթարում է ընտրողների ազատ կամքի ձևավորումը՝ նրանց դնելով նյութական կախվածության մեջ գործող իշխանությունից:

1.2.2 **Նախընտրական քարոզչության ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման արգելք (ՀՀ Ընտրական օրենսգիրք, Հոդված 23).** Պետական բյուջեի միջոցների օգտագործումը՝ ընտրողների լայն զանգվածների (թոշակառուներ, բաղաքացիական ծառայողներ) սիրաշահման նպատակով, հանդիսանում է պետական լիազորությունների և ֆինանսական վարչական ռեսուրսի ուղղակի չարաշահում հօգուտ իշխող ուժի վերարտադրության:

1.2.3 **Ընտրողներին կաշառք տալու արգելք (ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 236).** Թեև բարձրացումները ձևակերպվում են որպես օրինական ակտեր, դրանց ժամանակագրական համընկնումը ընտրությունների հետ կրում է անուղղակի նախընտրական կաշառքի (պոդկուպի) հատկանիշներ՝ քաղաքական աջակցություն ստանալու ակնկալիքով:

1.2.4 **Հանրային միջոցների վատնում (ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 256 - Վստահված գույքը հափշտակելը կամ վատնելը).** Նախորդ տարի բյուջետային ռեսուրսների բացակայության մասին պաշտոնական հայտարարություններից հետո, ընտրական փուլում հանկարծակի միջոցների հայտնաբերումը և ծախսումը վկայում է պետական միջոցների ոչ թե տնտեսական, այլ քաղաքական նպատակահարմարությամբ վատնման մասին:

1.2.5 **Բյուջետային համակարգի սկզբունքների խախտում («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 1.2).** Բյուջետային ծախսերի արդյունավետության, հրապարակայնության և հավասարակշռվածության սկզբունքները խախտվել են՝ ի օգուտ կարճաժամկետ քաղաքական դիվիդենտների ապահովման:

1.3 *Սահմանադրական դատարանի թիրախավորման և ոչ անաչառության ռիսկերի մասով դիմումի պահանջի հետ կապված* Դիմումատուն ներկայացրել է դատական իշխանության անկախության վտանգման վերաբերյալ հետևյալ փաստարկները և նորմեր.

1.3.1 **Դատավորի անկախության և անաչառության սկզբունք (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 164).** Ընտրական վեճերը լուծող բարձրագույն մարմնի՝ ՍԴ դատավորների աշխատավարձերի կտրուկ բարձրացումը ընտրություններից առաջ ստեղծում է նյութական շահագրգռվածություն և կասկածի տակ է դնում նրանց անաչառությունը (Impartiality) գործող իշխանության նկատմամբ:

1.3.2 **ՍԴ դատավորի վարքագծի կանոններ («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, Հոդված 12).** Դատավորը պետք է խուսափի այնպիսի վարքագծից կամ իրավիճակից, որը կարող է ողջամիտ կասկած հարուցել նրա անկախության և անաչառության վերաբերյալ: Ընտրությունների շեմին իշխանության կողմից տրվող խոշոր ֆինանսական հավելումների ընդունումը խաթարում է այս օրինական պահանջը:

1.3.3 **Շահերի բախում հանրային պաշտոններում («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 33).** ՍԴ դատավորների մասով առկա է ինստիտուցիոնալ շահերի բախում: Նրանք ստանում են արտոնություններ մի իշխանությունից, որի անցկացրած ընտրությունների օրինականությունը հետագայում պետք է քննեն և գնահատեն:

1.3.4 **Ընտրական վեճերի քննության կանխակալություն («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, Հոդված 74).** ՍԴ-ն ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելիս պետք է լինի բացարձակ չեզոք: Սակայն ֆինանսական խոշոր խրախուսումները իշխանության կողմից ստեղծում են կանխակալ լոյալության հիմքեր, ինչը թույլ չի տա դատարանին անաչառ քննել ընդդիմության բողոքները:

1.3.5 **Հանրության վստահության խաթարում դատական իշխանության նկատմամբ (ՀՀ Դատական օրենսգիրք, Հոդված 7).** Դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության պահպանումը ժողովրդավարության հիմքն է: Տվյալ գործընթացը հանրության մոտ ձևավորել է հաստատուն տպավորություն, որ ՍԴ-ն «գնվել» է իշխանության կողմից՝ վերարտադրությունն իրավականորեն ձևակերպելու համար:

1.3.6 **Իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտում (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 4).** Օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից դատական իշխանության բարձրագույն օղակի նկատմամբ կիրառվող այս ֆինանսական ազդեցության գործիքը խախտում է իշխանությունների հավասարակշռման և զսպումների մեխանիզմը:

1.4 Դիմումատուի պնդմամբ՝ վերոգրյալ գործընթացը հարուցում է հանրային հիմնավոր կասկածներ հետևյալ պատճառներով.

Հակասական հայտարարություններ. Նախորդող ժամանակահատվածում իշխանությունները պաշտոնապես պնդում էին, որ պետական բյուջեում բացակայում են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները համատարած աշխատավարձերի բարձրացման համար:

Ժամանակագրական համընկնում. Ֆինանսական միջոցների հանկարծակի «հայտնաբերումը» և բաշխումը ուղիղ համընկել են ընտրական փուլի հետ, ինչը կարող է դիտարկվել որպես ընտրազանգվածի և դատական համակարգի անուղղակի ուղղորդում (վարչական ռեսուրսի քաղաքական նպատակներով օգտագործում):

1.5 Դիմումատուն, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթները ներկայացրել է հետևյալ պահանջները՝

Հարուցել վարույթ, գնահատել նշված պաշտոնատար անձանց բարեվարքությունը և տալ պաշտոնական եզրակացություն պետական միջոցների քաղաքականացման և ՍԴ անկախության խաթարման վերաբերյալ:

Իրականացնել բարեվարքության և վարքագծի կանոնների ուսումնասիրություն՝ պարզելու, թե արդյո՞ք այս որոշումների կայացման հիմքում ընկած չէ շահերի բախում կամ պետական միջոցների չարաշահում՝ իշխանության վերարտադրության նպատակով:

2. Դիմումի ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական հանգամանքները, կիրառելի օրենսդրական կարգավորումները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները

2.1 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց **(բացառությամբ** պատգամավորի, **դատավորի,** Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ:

2.2 Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև ՀՀ վարչապետի դիմումի հիման վրա:

2.3 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց **(բացառությամբ** պատգամավորի, **դատավորի,** Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից (...) **վարքագծի կանոնների առերևույթ խախտումների,** բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, **կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:**

2.4 Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը, հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

2) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված (...) շահերի բախման վիճակում **առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն զբաղեցնող անձի **անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա**

զբաղեցրած պաշտոնը, և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում (...)

3) **խախտումը կամ շահերի բախման դեպքը.**

4) **փաստական հանգամանքները, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր).**

5) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան). (...):

2.5 Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից. (...):

2.6 «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը Սահմանադրական դատարանի դատավորի՝ սույն օրենքով սահմանված վարքագծի կանոնների խախտումն է (...):

2.7 Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկում է Սահմանադրական դատարանը** նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված կարգով:

2.8 Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 40.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը,** այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների համար, ինչպես նաև պաշտոնեական դիրքի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

2.9 Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Վարչական դատարանները քննում են՝ Օրենսգրքի 40.1-40.4 և **40.6-40.19** հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման

վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

2.10 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի՝ «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» N 02-Ն որոշման (այսուհետ՝ Կանոնագիրք) 1-ին կետով սահմանված հավելվածի 10-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ **հանրային ռեսուրսներ են՝** ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական, մարդկային ռեսուրսները, աշխատաժամանակը, պետական կամ հանրային սեփականություն հանդիսացող այլ ռեսուրսները:

2.11 Կանոնագրքի 1-ին կետով սահմանված հավելվածի 62-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար:

2.12 Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով Դիմումատուի կողմից ներկայացված փաստարկները՝ Հանձնաժողովն անդրադառնալով վարչական ռեսուրսի չարաշահման (վարքագծի կանոնների խախտման), պետական միջոցների քաղաքականացման և ընտրողների անուղղակի կաշառման հետ կապված Դիմումի պահանջին՝ արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքի 40.8-րդ և 223-րդ հոդվածների համեմատական վերլուծությունից հետևում է, որ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործումը, (...) ինչպես նաև պաշտոնեական դիրքի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար սահմանված է որպես վարչական

իրավախախտում, որի վերաբերյալ գործերի քննությունն Օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ իրականացնում են Վարչական դատարանները՝ վարչական իրավախախտման արձանագրությունը կազմած իրավասու ընտրական հանձնաժողովի կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հայցադիմումի հիման վրա: Նշվածից ուղղակիորեն բխում է, որ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի ենթադրյալ օգտագործման հետ կապված հարցերը, հետևաբար նաև Դիմումատուի կողմից բարձրացված հարցերը, դուրս են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վարչական ռեսուրսի ենթադրյալ օգտագործման դեպքերի քննությունը դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, և նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը պետք է առաջին հերթին դատական կարգով քննվեն որպես վարչական իրավախախտում, ինչից հետո միայն Հանձնաժողովը կարող է Վարչական դատարանի կողմից հաստատված փաստերի հիման վրա գնահատել կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտման առկայությունը կամ բացակայությունը:

Ընդ որում, Հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմումն, արձանագրել է նաև, որ Դիմումատուի կողմից չեն պահպանվել նաև վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող դիմումին ներկայացվող օրենսդրական պահանջները:

Մասնավորապես, Դիմումատուի կողմից ոչ միայն չի ներկայացվել վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տված կամ շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված անձի տվյալները (ընդհանրական նշվել է «ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանություններ»), այլև չի մատնանշվել Կանոնագրքով սահմանված այն վարքագծի կանոնը, որը ենթադրաբար խախտվել է նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործման շրջանակներում: Այնուամենայնիվ՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ Դիմումով բարձրացված հարցերը Հանձնաժողովի կողմից Կանոնագրքի համատեքստում կարող են քննարկման առարկա դառնալ միայն Օրենսգրքի 40.8-րդ հոդվածով սահմանված գանցանքը դատական կարգով քննվելուց հետո:

Անդրադառնալով Սահմանադրական դատարանի դատավորների աշխատավարձը բարձրացնելու շրջանակներում վարչական ռեսուրսի չարաշահման (վարքագծի կանոնների խախտման) և դատավորների անաչառության խաթարման վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու պահանջին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է այն սուբյեկտային կազմը, որոնց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննումը և լուծումը վերապահված է

Հանձնաժողովին: Միաժամանակ նույն կետով սահմանված են նաև նշված սուբյեկտային կազմից բացառություններ, մասնավորապես՝ Հանձնաժողովը չի կարող քննության առնել պատգամավորի, **դատավորի,** Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորի՝ նույն օրենքով սահմանված վարքագծի կանոնների (բացառությամբ՝ նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կանոնների) խախտումների առկայության դեպքում **Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը վերապահված է բացառապես Սահմանադրական դատարանին:**

Հետևապես՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ դատավորի, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորի վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ վարույթների իրականացումը ևս դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ Դիմումով բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից՝ գտնում ենք, որ Դիմումը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի հուլիսի 1-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումն ուղարկել Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ